ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 օգոստոսի 2024թ. թիվ 539-Ա

Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին մասի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Սարգիս Սարգսյանին 2024 թվականի օգոստոսի 20-ից ազատել «ՀՀ Լոռու մարզի Ծաղկաբերի Դ.Մարտիրոսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնից և լուծել նրա հետ 2019 թվականի օգոստոսի 19-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. «ՀՀ Լոռու մարզի Ծաղկաբերի Դ.Մարտիրոսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝ Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածով սահմանված կարգով Սարգիս Սարգսյանի հետ կատարել վերջնահաշվարկ:

3. Մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետին՝

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով սույն վարչական ակտը ստորագրվելուց հետո եռօրյա ժամկետում էլեկտրոնային փոստի միջոցով կամ առձեռն ծանուցել հասցեատիրոջը:

X

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. օգոստոսի 13
ք.Վանաձոր